## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լեռնապատ համայնք
գ.Լեռնապատ, հեռախոս /032268781/, Lernapat.Lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

04 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 33-Ա

ԼԵՌՆԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 06-041-203-ից ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Լեռնապատ համայնքի ղեկավարի առաջարկությունը , պարզվեց, որ Լեռնապատ համայնքի 06-041-0203 ծածկագրից առանձնացված 0,12հա հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն, սակայն տեղի է ունեցել սխալ քարտեզագրում և 06-041-203-082 ծածկագրով հողամասը չի փոխանցվել Լեռնապատ համայնքին, այլ հանդիսանում է << անհայտ>> քաղաքացիների սեփականություն, ուստի անհրաժեշտություն է առաջանում ճշտել քարտեզի հատվածը համայնքային հողամասը օգտագործման տրամադրելու նպատակով: Ղեկավարվելով ‹‹Տեղական ինքնակառավարմա նմասին›› ՀՀ օրենքի 16 հոդվածով, ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, ‹‹Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին›› ՀՀ օրենքի 4-րդ՝ 8-րդ և 34-րդ հոդվածներով, Լեռնապատ համայնքի ավագանին `

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուղղել քարտեզագրման արդյունքում առաջացած սխալը և 06-041-203-ից առանձնացված 0,12 հա 2-րդ կարգի ջրովի վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲԱՋՅԱՆ ԱՐԿԱԴԻ
2. ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԱՅԻԿ
3. ՍԵՐՅՈԳԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
4. ՔՈՉԱՐՅԱՆ ԱՐԱՅԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԻԲԵԿ ԱԲԱՋՅԱՆ